

բաբազմեալ ի իշխան Լաւրա՛յ Սրբոյ Քաղաքին՝ յա-
րեւմտային անկիւն, իբր զանշէջ արեգակն, լուսա-
տու միշտ քառադէմ կողմանց, ունեւով յարեւել
իւր զբարեւոյն շէրէ՛մ հարաւ շնորհ Լաւրա՛յ¹։
Մերձ գօլով նմին՝ սարսափելի տեղիք հրաշից
Տեառն մերոյ. այսինքն է՝ աղօթից քարոզութեանց,
նախատանաց, ձաղանաց եւ արփիագիտակ դա-
գաթն Գալիլիոյ, ուր երեւեցաւ մետասանից, ուստի
եւ համբարձաւ իսկ. որով եւ դալոց է²։ Իսկ ի Լա-
ւրա՛յին իշխան զՔաղաքն Գաւթի, զՉորն Ողկուզաց
եւ զԵփրաթայ եւ զԱուրբ Այրն. եւ հուպ իսկ ինք-
նեան ունեւով զԱուրբն Սիօն եւ զԱուրբն Փրկիչ³։

Եւ ընդ կողմն հիւսիսայ զԿաթողիկէն Աշխար-
համատրան եւ զըղձալի բլուր Սրբոյն Գողգոթայի,
ուր կախեցաւ խնձորն երկնային եւ ճմլեցաւ ող-
կոյզն արփիագեղ. յորում տարածեալ Բագէն
հզօր՝ զբազուկ իւր դիտելով ընդ Լաւրա՛ ի վերայ
սրբոյ Տաճարիս այսորիկ⁴։ Եւ ընդ իշխան արեւմտեց
զԱնան Սրբոյ Խաչին եւ զԱնապատն Մկրտչին եւ
ինքն որպէս ական շափիւղայ ի մէջ սոցունց վերա-

հետզհետէ բարգաւաճեցաւ ու շքեղացաւ այդ նշանաւոր
Սրբավայրը։

1 Ս. Յակոբայ Անքը՝ Երուսաղէմի, հետեւաբար եւ
Ս. Յարութիւն Տաճարին հարաւային-արեւմտեան կողմն է։
Իսկ Ս. Յակոբին արեւելեան կողմն է Ս. Արտաշատի (=
«մաքուր ծնողի հայրածագ լուսոյն».) շիրիմը։

2 Գեթսեմանի ձորին եւ ձիթենեաց լեռան կ'ականարկէ
խմբովին։

3 Երուսաղէմի հարաւային կողմը, քաղաքէն դուրս
Բեթղեհէմը (= Քաղաք Գաւթի) կը տարածուի Եփրաթայ
այգեւէտ, գինեղից դաշտը. հոն է Ս. Ծնունդը (= Ս. Այրը)
եւ Հայոց Անքը (= «Ս. Փրկիչ»)։

4 Ս. Յարութեան տաճարը (= «Կաթողիկէ Աշխար-
համատրան») որուն մէջ հիւսիսային կողմը կը բարձրանայ
Գողգոթայի Սեղանը, կը տիրէ իր հարաւային կողմը՝ Ս. Յա-
կոբայ Անքին վրայ։